

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«26» օգոստոս 2019թ.

No 2341 - Լ

ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև կառավարության 2019 թվականի մայիսի 16 -ի N 650-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 23.3-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

ԾՐԱԳԻՐ
ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
<p>1.Բնակչության և բուժաշխատողների իրազեկում սիրտ-անոթային հիվանդությունների (այսուհետ՝ ՍԱՀ) ռիսկի գործոնների կարևորության մասին (աննդի աղ, ծխախոտ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն և այլն)</p>	<p>ԱԱՊ օղակի բժիշկների և քաղաքացիների իրազեկվածության բարձրացում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ մարզապետարաններ</p> <p>Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p> <p>Հասարակական և միջազգային կազմակերպություն/ներ (համաձայնությամբ)</p>	<p>2019-2023թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

<p>2. ՀՀ բնակչության ոչակի խմբերում ՍԱՀ զանգվածային սքրինինգների իրականացում</p>	<p>ՍԱՀ կանխարգելում և վաղ հայտնաբերում</p>	<p>Առողջապահության նախարարություն Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ</p>	<p>2019-2020թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>3. Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն ուղղությամբ տարածքային կառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցություն, ինչպես նաև նրանց համար առողջ ապրելակերպին ուղղված</p>	<p>Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանմանն նպատակով բարենպաստ պայմանների ապահովում</p>	<p>Առողջապահության նախարարություն Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>2021-2023թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

<p>ուղեցույցների մշակում</p>					
<p>4. ԱԱՊ բժիշկների շրջանում դասընթացների անցկացում՝ ՍԱՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման ուղեցույցների ներկայացման նպատակով</p>	<p>ԱԱՊ բժիշկների ՍԱՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման գիտելիքների բարելավում</p>	<p>Առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտ</p> <p>Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>		<p>2021-2023թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>5. ՍԱՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման ուղեցույցների մշակում և ներդրում միջազգային ուղեցույցների հիման վրա</p>	<p>ՍԱՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման ուղեցույցներ բժիշկների համար</p>	<p>Առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտ</p> <p>Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>		<p>2020-2023թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

<p>6. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ՍԱՀ ախտորոշման և բուժման ծառայություններից օգտվող շահառուների խմբերի ընդլայնում</p>	<p>Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության բարձրացում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>		<p>2023թ.</p>	<p>Պետական բյուջե</p>
<p>7. Առողջապահության նախարարի կողմից հաստատված ծառայությունների շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով մատուցվող սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական (կորոնար անոթների ստենտավորում) ծառայությունների մշտադիտարկում, խնդիրների վերահանում</p>	<p>ՍԱՀ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների շրջանակներում իրականացվող միջոցառումների վերանայում և խնդիրների վերացում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>		<p>2019-2023 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>8. Առողջապահության նախարարի կողմից</p>	<p>ՍԱՀ բժշկական օգնության և</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>		<p>2020-2023 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ</p>

<p>հաստատված ծառայությունների շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով մատուցվող գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների բուժման , ներառյալ՝ ներերակային թրոմբոլիտիկ թերապիան (ալտեպլազա դեղով) ծառայությունների մշտադիտարկում, խնդիրների վերահանում</p>	<p>սպասարկման ծառայությունների շրջանակներում իրականացվող միջոցառումների վերանայում և խնդիրների վերացում</p>				<p>աղբյուրներ</p>
<p>9.«Սրտի շաբաթի» անցկացում՝ նվիրված սրտի համաշխարհային օրվան /29 սեպտեմբեր/ դասախոսություններ, հանրային միջոցառումներ քաղաքների բանուկ մասերում, մանկավարժների</p>	<p>Քաղաքացիների իրազեկվածության բարձրացում, ՍԱՀ վաղ հայտնաբերում</p>	<p>Առողջապահության նախարարություն, Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզապետարաններ</p>	<p>2019- 2022 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

<p>զարկերակային ճնշման չափումներ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, մամուլի ասուլիսներ հանրաճանաչ սրտաբանների կողմից, քայլարշավ երևանում</p>					
<p>10.Սրտաբանության ակտուալ թեմաներով դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստման ցիկլերի անցկացում առաջնային օղակի սրտաբանների և թերապևտների համար առաջատար սրտաբանների կողմից</p>	<p>ԱԱՊ օղակի բժիշկների իրազեկվածության բարձրացում</p>	<p>Առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտ Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզապետարաններ</p>	<p>2020-2023 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>11. Անհետաձգելի սրտաբանության թեմաներով դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստման</p>	<p>Շտապ օգնության բժիշկների իրազեկվածության բարձրացում</p>	<p>Առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտ Հայաստանի սրտաբանների</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան</p>	<p>2020-2023 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

<p>ցիկլերի անցկացում շտապ օգնության բժիշկների համար</p>		<p>ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>(համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ</p>		
<p>12. Էխսորտագրության լայն ներդնում մարզերում և մասնագետների վերապատրաստում մարզային հիվանդանոցների համար</p>	<p>Մարզային բնակչության համար սրտաբանական ծառայությունների հասանելիության ապահովում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>	<p>Հայաստանի սրտաբանների ասոցիացիա (համաձայնությամբ)</p>	<p>2023թ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>13. Մարզային սրտաբանության զարգացում և համապատասխան կադրերով ապահովվածության բարելավում խթանիչ մեխանիզմների կիրառմամբ</p>	<p>Մարզային բնակչության համար սրտաբանական ծառայությունների հասանելիության ապահովում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ մարզպետարաններ</p>	<p>2020-2023 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>